Կարգապահական գործ թիվ 17046

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի փետրվարի 22-ին թիվ 33-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/24-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տարոն Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Հարություն Հարությունյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր՝ 1187) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

26.06.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 21.06.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017թ. հունիսի 21-ի հերթական դատական նիստում ամբաստանյալ Գագիկ Եղիազարյանը խանգարել է դատական նիստի բնականոն ընթացքը, անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ, ինչի պատճառով դատարանը Գագիկ Եղիազարյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 314.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ նիստերի դահլիճից հեռացնելը: Այնուհետև դատական նիստն ընդմիջվել է մեկ ժամով: Ընդմիջումից հետո դատական նիստը շարունակվել է առանց Գագիկ Եղիազարյանի ներկայության, իսկ պաշտպան Տիգրան Եգորյանը չի մասնակցել դատական նիստին, սակայն դիմում է ներկայացրել դատարանին և հայտարարել է, որ առանց ամբաստանյալի՝ չի կարող մասնակցել դատական նիստին, քանի որ իր պաշտպանյալն առարկում է դրա դեմ, և իրենց միջև այդպիսի պայմանագիր չի կնքվել, այդ պատճառով ինքը հեռանում է նիստի դահլիճից:

Դատարանը գտել է, որ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017թ. հունիսի 21-ի հերթական դատական նիստում Տիգրան Եգորյանն իր վերոնշյալ վարքագծով ակնհայտ

անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, քանի որ առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ լքել է դատական նիստերի դահլիճը և դրանով իսկ խոչընդոտել է նիստի բնականոն ընթացքին:

Դատարանը 21.06.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է *Ամբաստանյալ Գագիկ Եղիազարյանի պաշտպան Տիգրան Եգորյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 07.07.2017թ. թիվ 188-Ա/ԿԳ-17046 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

11.07.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Դիմողը ներկայացրել է թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 21.06.2017թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև խորհրդի կողմից քննության ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

11.09.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանը կազմել է եզրակացություն, որի համաձայն նախապատրաստողը գտել է, որ կարգապահական վարույթի նախապատրաստման ընթացքում հաստատվել են հետևյալ հանգամանքները.

21.06.2017թ. դատական նիստի ընթացքում դատարանը դատական սանկցիա է կիրառել ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով ամբաստանյալներից Գագիկ Եղիազարյանի

նկատմամբ և նրան հեռացրել է դատական նիստերի դահլիճից, որից հետո նիստն ընդմիջվել է 1 ժամով: Ընդմիջումից հետո սկսված՝ դատական նիստին Գագիկ Եղիազարյանի պաշտպան Տիգրան Եգորյանը դատական նիստին ներկա չի գտնվել և այդ կապակցությամբ դատարանին ներկայացրել է դիմում, որում մասնավորապես նշել է, որ իր պաշտպանյալ Գագիկ Եղիազարյանը հեռացվել է դատական նիստից 6 ժամով, ինչի կապակցությամբ հայտնել է, որ չի կարող մասնակցել դատական նիստին որպես Գագիկ Եղիազարյանի պաշտպան փաստաբանի հանձնարարության պատճառաբանությամբ (Գագիկ Եղիազարյանից), ինչպես նաև այն պատճառով, որ ինքն անհնար է դիտարկում և անարդյունավետ իր պաշտպանյալի բացակայությամբ նիստին մասնակցելն ու նրա պաշտպանությունն իրականացնելը: Տիգրան Եգորյանը նշել է, որ այդ պայմաններում անհնարին կլինի նախ և առաջ իր պաշտպանյալի դիրքորոշումը պարզելը իր իրավունքներին վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ: Նշվածը հաշվի առնելով, Տիգրան Եգորյանը հայտնել է, որ չի մասնակցելու 21.06.2017թ. նիստին Գ.Եղիազարյանի բացակայության պայմաններում:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 14.09.2017 թ.:

Խորհրդի նիստը տեղի ունեցել 2018 թվականի փետրվարի 22-ին, ժամը՝ 19:30 -ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

Պատասխանողը 22.02.2018թ. ժամը 18.39 էլեկտրոնային փոստով ներկայացրել է միջնորդություն խնդրելով հետաձգել նույն օրը ժամը 19.30 նշանակված թիվ 17046 կարգապահական գործով նիստը: Պատասխանողը որպես հետաձգման պատճառ նշել է հաջորդ օրը՝ 23.02.2018թ. ժամը 11:00-ին նշանակված թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով դատական նիստին պատրաստվելու անհրաժեշտությունը: Պալատի խորհուրդը մերժել է նշված միջնորդությունը, քանի որ՝

- նախկինում էլ՝ 26.10.2017թ. և 21.12.2017թ. Պատասխանողը խորհրդի նիստերի հետաձգման միջնորդություններ է ներկայացրել.
- 23.02.2018թ. դատական նիստը չէր կարող խոչընդոտել 22.02.2018թ. նշանակված խորհրդի նիստի անցկացմանը.
- պատասխանողը չէր ներկայացրել 22.02.2018թ. իր ծանրաբեռնվածության գրաֆիկը, ինչից ելնելով խորհուրդը կարող էր այլ հետևության հանգել:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Տիգրան Եգորյանը հանդիսանում է Գագիկ Եղիազարյանի

պաշտպանը:
Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ:

2. Թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 21.06.2017 թվականի դատական նիստում Գագիկ Եղիազարյանին դատարանի կողմից դատական նիստերի դահլիճից հեռացնելու վերաբերյալ որոշմանը հաջորդած ընդմիջումից հետո վերսկսված դատական նիստին չի մասնակցել՝ դատարանին ներկայացնելով դիմում առ այն, որ իր պաշտպանյալ Գագիկ Եղիազարյանը հեռացվել է դատական նիստից 6 ժամով, ինչի կապակցությամբ հայտնել է, որ չի կարող մասնակցել դատական նիստին որպես Գագիկ Եղիազարյանի պաշտպան փաստաբանի հանձնարարության պատճառաբանությամբ (Գագիկ Եղիազարյանից), ինչպես նաև այն պատճառով, որ ինքն անհնար է դիտարկում և անարդյունավետ իր պաշտպանյալի բացակայությամբ նիստին մասնակցելն ու նրա պաշտպանությունն իրականացնելը: Տիգրան Եգորյանը նշել է, որ այդ պայմաններում անհնարին կլինի նախ և առաջ իր պաշտպանյալի դիրքորոշումը պարզելը իր իրավունքներին վերաբերող տարբեր հարցերի վերաբերյալ: Նշվածը հաշվի առնելով, Տիգրան Եգորյանը հայտնել է, որ չի մասնակցելու 21.06.2017թ. նիստին Գ.Եղիազարյանի բացակայության պայմաններում:
Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիայի որոշմամբ, Տիգրան Եգորյանի՝ դատարանին ուղղված դիմումով, դատական նիստի արձանագրությամբ (դատական նիստի ձայնագրառում 14:57-14:59)

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Եգորյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2015-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 11 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (8 ավարտված վարույթ և 3 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը: 6 վարույթ Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/46-Ա, 03.10.2016թ. թիվ ԿԳ/107-Ա, 31.10.2016թ. թիվ ԿԳ/157-Ա, 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա, 11.11.2016թ. թիվ ԿԳ/162-Ա, 11.11.2016թ. թիվ ԿԳ/163-Ա որոշումներով կարճվել է: Խորհրդի 23.11.2016թ. թիվ ԿԳ/188-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար Տիգրան Եգորյանը ենթարկվել կարգապահական տույժի՝ նկատողության ձևով, որը բողոքարկվել է դատական կարգով:
Խորհրդի 16.10.2017թ. թիվ ԿԳ/92-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 և 2.6.1 ենթակետերի խախտման համար Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ իր հաշվին 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն քրեական դատավարության բնագավառի թեմայով, որը դատական կարգով բողոքարկվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. *«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:»:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով**:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

արդյո՞ք Պատասխանողն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:

Ըստ հաստատված փաստերի, թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 21.06.2017 թվականի դատական նիստում Գագիկ Եղիազարյանին դատարանի կողմից դատական նիստերի դահլիճից հեռացնելու վերաբերյալ որոշմանը հաջորդած ընդմիջումից հետո վերսկսված դատական նիստին Պատասխանողը չի մասնակցել: Պատասխանողը դատական նիստին չմասնակցելը պատճառաբանել է այն հանգամանքով, որ իր պաշտպանյալի կողմից նման հանձնարարություն չունի, ինչպես նաև այն պատճառով, որ ինքն անհնար է դիտարկում և անարդյունավետ իր պաշտպանյալի բացակայությամբ

նիստին մասնակցելն ու նրա պաշտպանությունն իրականացնելը: ***Պալատի խորհուրդը կարևոր է համարում սույն որոշմամբ տալ այն հարցի պատասխանը, թե՞ արդյոք դատական նիստին չմասնակցելու վստահորդի հանձնարարությունը օրինական հանձնարարություն է, և արդյո՞ք փաստաբանը պարտավոր էր կատարել այդ հանձնարարությունը:***

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ <u>օրենքով չարգելված բոլոր միջոցներով:</u>*

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով**:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ *«Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝*

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.

(...)»

Կանոնագրքի 3.1.6 կետի համաձայն՝ *Եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա <u>փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:</u>*

Նշված կանոնների համակարգային վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ քրեական գործով պաշտպանն պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Պատասխանողի արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում Պատասխանողի կողմից չեն ներկայացվել բացատրություններ դատական նիստին չմասանկցելու պատճառների վերաբերյալ:

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն Տիգրան Եգորյանը առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել, հետևաբար դիտավորությամբ այդպիսի վարքագիծ դրսևորելով խախտել է Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ պետք է կիրառել տույժ՝ նկատողության ձևով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր՝ թիվ 1187) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր՝ թիվ 1187) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Տարոն Սիմոնյան**

22 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/24-Ա
ք. Երևան